‘ՎԻԵՆՆԱ-ՄՅՈՒՆԽԵՆ’ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

07.02.2014 14:53

ՀԱՐԳԵԼԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ

“Փաստաբանների Միջազգային Միություն” հայաստանյան ներկայացուցչությունը* ՀՀ փաստաբանական պալատի և ՀՀ փաստաբանական դպրոց հիմնադրամի հետ համատեղ 2014թ. ապրիլ ամսվա կեսերին կազմակերպում է գիտաուսումնական այց Վիեննա (Ավստրիա) և Մյունխեն (Գերմանիա) քաղաքներ:

Այցի նպատակն է ծանոթանալ փաստաբանական գործունեության միջազգային ստանդարտներին, մասնավորապես՝ Ավստրիայի փաստաբանական գործունեության կազմակերպման օրենսդրական առանձնահատկություններին, ինչպես նաև Մյունխենի փաստաբանների առօրյա աշխատանքին: Հանդիպումները տեղի են ունենալու Ավստրիայի փաստաբանական պալատում և Մյունխենի փաստաբանների ասոցիացիայում: Դասընթացները թարգմանվելու են ռուսերեն լեզվով:

Այցի ավարտին, Վիեննայի փաստաբանական պալատում մասնակիցներին կտրամադրվի հատուկ **Միջազգային Նմուշի Հավաստագիր:**

Այցի տևողությունն է՝ 8 օր (7 գիշեր): Շրջագայության ժամանակ մասնակիցները կբնակեցվեն քաղաքների կենտրոնական մասում գտնվող 4* հյուրանոցներում՝ (3) գիշեր Վենայում և (4) գիշեր Մյունխենում:

Այցի շրջանակներում նախատեսվում են նաև հարմարավետ ավտոբուսով, (ռուսալեզու գիդի հետ միասին) հետաքրքիր շրջագայություններ Վիեննայի, Զալցբուրգի և Մյունխենի տեսարժան վայրեր: Ցանկության դեպքում կկազմակերպվեն նաև լրացուցիչ շրջագայություններ Բադեն քաղաք, որը գտնվում է Վիեննա քաղաքից 30 կմ հեռավորության վրա, որտեղ կարող եք լողալ և հանգստանալ առողջարանային քաղաքի ստորերկրյա բուժիչ տաք աղբյուրներում, ինչպես նաև տեսնել Մյունխենի հայտնի Նոյվանշտայն գեղատեսիլ միջնադարյան դղյակները, այցելել Շտուտգարտ քաղաքի հանրաճանաչ “Մերսեդես-Բենց” և “Պորշե” թանգարաններ :

Գիտաուսումնական այցի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկությանը ծանոթացեք՝ կից ներկայացված ծրագրում :

Այցին մասնակցել ցանկացողներին խնդրում ենք հայտերը ազատ ոճով ուղղարկել մինչև ս.թ. **փետրվարի 15-ը** mcca@inbox.ru էլ. փոստին, կամ զանգահարել 010 32-02-02 կամ 091 011561 հեռախոսահամարներին:

Բեռնել ծրագիրը

Առաջարկվող նորություններ

07.02.2014ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ Է ՀԱՐՈՒՑՎԵԼ ՓԱՍՏԱԲԱՆ ԳԵՎՈՐԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԻ ՄԵՋ ՍԵՌԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՅՀՈՅԱՆՔ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

17.05.2014ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ, ԿՈՏԱՅՔԻ, ԱՐՄԱՎԻՐԻ ԵՎ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԵՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԸՆՏՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17.05.2014ՀՀ ՓՊ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 16.05.2014Թ ՆԻՍՏԻ ԺԱՄԱՆԱԿ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՁԵՎԵՐԸ

27.05.201431.05.2014Թ. ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԻՆՔՆԱՌԱՋԱԴՐՎԱԾ/ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 1){ updateCommentsCount(window.location.href); } })